ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՓԱՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

1149, գ.Փարաքար, Նաիրի 42

Հեռ. 231-6-00-42, 060 53-00-42
E-mail paraqar.armavir@mta.gov.am
www.parakar.am

23.12.2019թ. թիվ 1208

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Մաթևոսյան

Ուղարկվում է Փարաքար համայնքի 2019թվականի բյուջեի փոփոխությունը՝ հիմք համայնքի ղեկավարի 2019թվականի դեկտեմբերի 17-ի N 140-Ն որոշումը:

Առդիր 28 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ՄԻՆԱՍՅԱՆ

Կատարող՝
Մ.Մարգարյան
Հեռ. 0231 6-00-42

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ Ն-23047-2019
25 12 2019 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019 թվականի N 140-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի N 6-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 11-ի N 6-Ն որոշման 4-րդ կետը. *Որոշում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 11-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2019 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 6-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Փարաքար համայնքի 2019թվականի ֆոնդային բյուջեի եկամուտները ավելացնել 44010.0 հազ. Դրամով՝ 1261 տողի «0» թիվը փոխարինել «44010.0» թվով:

2) Բաժին 01 Խումբ 1 Դաս 1 Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում ծախսերի նախահաշվի Այլ վարձատրություններ 4115 հոդվածի «1000.0» թիվը՝ փոխարինել «990.0» թվով: Պարտադիր վճարներ 4823 հոդվածի «246.7» թիվը՝ փոխարինել «256.7» թվով:

3) Բաժին 01 Խումբ 6 Դաս 1 «Ընդհանուր հանրային բնույթի ծառայություններ (այլ դասին չպատկանող)» ծախսերի նախահաշվի Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 հոդվածի «700.0» թիվը փոխարինել «580.0» թվով: Մասնագիտական ծառայություններ 4241 հոդվածի «1700.0» թիվը փոխարինել «1810.0» թվով:

4) Բաժին 05 Խումբ 1 Դաս 1 «Շրջակա միջավայրի պաշտպանություն» Աղբահանում ծախսերի նախահաշվի Այլ վարձատրություններ 4115 հոդվածի «1664.0» թիվը փոխարինել «1653.0» թվով: Կոմունալ ծառայություններ՝ 4213 հոդվածի «2300.0» թիվը փոխարինել «2311.0» թվով: Շենքերի և շինությունների շինարարություն՝ 5112 հոդվածի «92060.0» թիվը փոխարինել «136070.0» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 17
գ.Փարաքար